

# Ն Ա Ի Ա Ս Ա Ա Ր Պ ԱԶԳԱԿ

ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ

ԹԻ 4

ՆՈՅԵՄԲԵՐ 2002

## Հ.Մ.Ը.Մ.Ի ՓԱՌՔԸ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԶԱՓԱՆԻՇԵՐՈՎ

Բոլորը կը հաստատեն, թէ Լիբանանի մէջ փինկ փոնկը Հ.Մ.Ը.Մ.ի մենաշնորհին վերածուած է աւելի քան յիսնամեակէ մը ի վեր: Եւ որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ականը չի բաւարարւիր «միջակութեամբ» եւ կը ձգտի միշտ աւելի բարձրին, մեր մարզիկները ատենէ մը ի վեր իրենց աչքերը յառած էին արաբական աշխարհի տիտղոսին, որուն տիրացան ի վերջոյ յաջորդական քանի մը ախոյեանութիւններէ ետք:

Հոկտեմբերին, Գահիրէի մէջ կայացած մրցաշարքին, Հ.Մ.Ը.Մ.ի աղջկանց խումբը, որ կը ներկայացնէ Լիբանանը, հանդիսացաւ ախոյեան, պարտութեան մատնելով արաբական աշխարհի զօրաւորագոյն կապմերէն՝ Եգիպտոսի Աիլին:

Յարատեւ փորձերու, միութենական օրինակելի կարգապահութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ականի աննկուն կամքի, ոգիի ու համոզումի շնորհիւ՝ մեր աղջիկները հանդիսացան արաբական աշխարհի յաւազոյնը, արժանացան տիտղոսին, արդարօրէն ու ամենայն հպարտութեամբ բարձրացուցին բաժակը: Փառք ու պատիւ մեր մարզիկներուն, որոնք անգամ մը եւս մեր միութեան դրօշը պահեցին բարձր, Լիբանանի պատիւը պահպանեցին ոգի ի բոնին:

Կ'ականկալենք, որ Հ.Մ.Ը.Մ.ի մնացեալ մեր խումբերը բոլոր մարզերուն մէջ հետեւին այս ողջունելի ու հպարտառիթ օրինակին, վարակուին անոնց հաւատքով, ի խնդիր Հ.Մ.Ը.Մ.ի յարատեւ վերելքին, հայութեան արժանապատուութեան, Լիբանանի պայծառութեան:

## ՃԱՏՐԱԿԻ 35ՐԴ ՈՂԻՄՊԻԱԿԱՆԻՆ

## ՀԱՅ ՎԱՐՊԵՏՆԵՐ Կ'ԱՐԶԱՆԱԳՐԵՆ ՏՊԱՒՈՐԻՉ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ

25 Հոկտեմբերին Սլովենիոյ Պլետ քաղաքին մէջ բացումը կատարուեցաւ նատրակի 35րդ Ողիմպիականին: Մինչեւ Նոյեմբեր 11 տեղի ունենալիք նատրակի տարուան այս մեծագոյն իրադարձութեան իրենց մասնակցութիւնը կը բերեն տղոց 141 եւ աղջկանց 94 հաւաքականներ:

Հայաստանի ազգային խումբը կը բաղկանայ հետեւեալ մեծ վարպետներէն (grandmaster). Վլատիմիր Յակոբեան, Սմբատ Լպուտեան, Կարէն Ասրեան, Գաբրիէլ Սարգսեան, Աշոտ Անաստասեան եւ Արտաշէս Մինասեան: Հաւաքականի մարզիչն է Արշակ Պետրոսեան:

Տղոց մրցումներուն այլ երկիրներու դրօշին տակ հանդէս կու գան հայազգի երկու վարպետներ՝ Կերի Գասպարով, որ կը գլխաւորէ Ռուսիոյ կազմը, եւ Սերգէյ Մովսէսեան, որ կը գլխաւորէ Սլովաքիոյ կազմը:

Ցրդ հանգրուանէն ետք, Հայաստանի տղոց հաւաքականը 20 կետով կը գրաւէ 13րդ դիրքը: Ռուսիա 24 կետով «բազմած է» առաջին դիրքին վրայ, իսկ Սլովաքիա 21 կետով կը գտնուի դասաւորման 5րդ հորիզոնականին վրայ:

Աղջկանց մրցումներուն՝ Հայաստանը կը ներկայացնեն Էլինա Դանիէլեան, Լիլիթ Մկրտչեան, Գոհար Հիլաբեան եւ Լիլիթ Գալոյեան: Հաւաքականի մարզիչն է Արսէն Եղիազարեան:



Հայաստանի նախկին ախոյեաններէն Նաիրա Աղապապեան մաս կը կազմէ Մոլտաւիոյ հաւաքականին, իսկ անոր աղջիկը՝ Ալմիրա Սքրիփչենքօ Լոթիէ, կը գլխաւորէ Ֆրանսայի կազմը: Լիբանանի հաւաքականը կը գլխաւորէ արաբական աշխարհի ախոյեան միջազգային վարպետ Քնարիկ Մուրատեանը: Հաւաքականի մաս կը կազմէ նաեւ Լիբանանի ախոյեան Սիւզան Մուրատեան:

8 հանգրուան ետք Քնարիկ Մուրատեան արձանագրած է 2 պարտութիւն, 3 հաւասարութիւն եւ 3 յաղթանակ: Լիբանանի կազմին ցարդ ունեցած 8,5 կետերէն 4,5ը ապահոված է Քնարիկ Մուրատեան:

Նշենք, որ Ողիմպիականը կը բաղկանայ 14 հանգրուանէ: Իւրաքանչիւր հանգրուանի բոլոր մրցումներուն ուղղակիօրէն հետեւելու համար կարելի է «այցելել» Ողիմպիականի պաշտօնական կայքը՝ [www.35chessolympiad.com](http://www.35chessolympiad.com):




Ռուսիոյ հաւաքականի ղեկ մրցումին Վլատիմիր Յակոբեան հաւասարութիւն մը արձանագրեց աշխարհի թիւ 1 Կերի Գասպարովի հետ

ملحق أرتاڤ

ԱՍԻԱԿԱՆ 14ՐԴ ԽԱՂԵՐ

# ՉԻՆԱՍՏԱՆ ՏԻՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՂԱԻ ՓՈՒՉԱՆԻ ՄԷՉ



(մրցանիշ մը) ժամանած 9900 աթլէթներ 38 տարեքեր մարզախաղերու մէջ պայքարեցան իրարու դէմ:

Առաջին իսկ օրէն մինչեւ 15րդ եւ վերջին օրը տիրապետողը եղաւ Չինաստան, որ խլաց առիւծի բաժինը՝ իր մրցակիցներուն ոչ մէկ առիթ տալով: Անիկա ասիական 14րդ խաղերը աւարտեց շահելով 150 ոսկի, 84 արծաթ եւ 74 պրոնզ մետալներ: 2րդ դիրքը գրաւեց հիւրընկալ երկիրը՝ Հարաւային Գորէա, որ շահեցաւ 96 ոսկի, 80 արծաթ եւ 84 պրոնզ մետալներ: Ճափոն գրաւեց 3րդ դիրքը՝ 44 ոսկիով, 73 արծաթով եւ 72 պրոնզով:

Լիբանան իր միակ մետալը շահեցաւ տղոց պատիւիլտիսկի մրցումներուն, այդ ալ շնորհիւ Մոհամէտ Անութիի, որ 90 քկ. եւ վեր դասակարգին մէջ գերազանցեց իր մրցակիցները: Ասիական խաղերուն առաջին անգամ ըլլալով էր, որ պատիւիլտիսկի իբրեւ մարզաձեւ նկատի կ'առնուէր:

Պատիւիլտիսկի մէջ Լիբանան պրոնզ մետալ մըն ալ շահեցաւ, սակայն նկատի ունենալով, որ Եուսէֆ Ջէյն մերժեց ենթարկուիլ խթանիչ դեղերու գործածութեան դէմ կատարուող քննութիւններուն, անկէ խլուեցաւ մետալը:

Միջինարեւելեան երկիրներուն մէջ իրան հանդիսացաւ առաւելագոյն մետալները շահողը՝ 8 ոսկի, 14 արծաթ եւ 14 պրոնզ:

Իրան իր մէկ ոսկի մետալը շահեցաւ Ֆութպոլի մրցաշարին, աւարտական մրցումին 2-1 արդիւնքով պարտութեան մատնելով Ճափոնը:

11րդ դիրքը գրաւեց Սէուտական Արաբիան, որ շահեցաւ եօթը ոսկի, մէկ արծաթ եւ մէկ պրոնզ մետալներ:

Արաբական այլ երկիր մը՝ Սուրիա, ասիական 14րդ խաղերը աւարտեց շահելով երեք պրոնզ մետալներ: Պաղեստին շահեցաւ մէկ պրոնզ մետալ:

Տղոց տասը հազար մեթր վազքի մրցումներուն տիրապետեցին արաբ աթլէթները: Սէուտական Արաբիա իր առաջին ոսկի մետալը շահեցաւ այս մրցումին, շնորհիւ՝ Մախլէտ Օթապիի: Արծաթ մետալին տիրացաւ Քաթար, իսկ պրոնզ մետալին՝ Պահարէյն:

Քուէյթ իր առաջին ոսկի մետալը շահեցաւ շնորհիւ Ֆաուզի Շամարիի, որ տղոց 400 մեթր վազքի մրցումներուն հանդիսացաւ առաջին:

Ասիական 14րդ խաղերուն կատարուեցան 270 քննութիւններ. խթանիչ դեղերու գործածու-

**Շ**աբաթ, 28 Սեպտեմբերին, Փուզանի մէջ (Հարաւային Գորէա) կատարուեցաւ ասիական 14րդ խաղերուն պաշտօնական բացումը: Մրցումները տեւեցին երկու շաբաթ: Երկու շաբթուան ընթացքին 44 երկիրներէ



# Հ.Մ.Ը.Մ.Ի ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԱՂՋԿԱՆՅ ԿԱԶՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ

Անցեալ շաբաթավերջին Պէյրուս վերադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի փինկ փոնկի աղջկանց կազմը, որ Եգիպտոսի մէջ տիրացաւ արաբական աշխարհի ակումբներու ախոյեանութեան տիտղոսին:

Հ.Մ.Ը.Մ.ի կազմը աւարտական հանգրուանին պարտութեան մատնած էր Եգիպտոսի Ահլին, որ Ցանգամ տիրացած է համաարաբական այս ախոյեանութեան:

Գահիրէի «Սթատ Նասր»ի մէջ տեղի ունեցող այս մրցումներուն Հ.Մ.Ը.Մ.ը կը ներկայացնէին Իրինա Երմեխովա, Լարա Քէչէպաշեան եւ Մարիանա Սահակեան:



## ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ Բ. ԴԱՍԱԿԱՐԳԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ՝ Հ.Մ.Ը.Մ. 3 - 1 ԱՐԳԻՒՆՔՈՎ ՅԱՂԹԵՑ ՀԵՐՐԻԷ ՄԱԺՏԱԼ ԱՅՆՃԱՐԻՆ

Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական կազմը Լիբանանի Բ. դասակարգի ախոյեանութիւնը սկսաւ յաղթանակով, երբ Ուրբաթ, 1 Նոյեմբերին 3 - 1 արգիւնքով (Կիսախաղ՝ 2 - 0) տապալեց Հըրրիէ Մաժտալ Այնճարը:

Հ.Մ.Ը.Մ.ի կողմը նշանակեցին Բաֆֆի Զուլֆայեան, Դրո Քէչէյեան եւ շուէտացի Թոմաս Պիրոք:

Ստորեւ՝ կը ներկայացնենք Հ.Մ.Ը.Մ.ի երթի մրցումներուն ժամանակացոյցը:

●Ա. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Ուրբաթ, 1 Նոյեմբեր ժամը 2:30ին

Հ.Մ.Ը.Մ. - Մաժտալ Այնճար (Պուրճ Համուտ)

●Բ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Կիրակի, 10 Նոյեմբեր ժամը 2:30ին

Հ.Մ.Ը.Մ. - Նահտ Պար էլիաս (Պուրճ Համուտ)

●Գ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Կիրակի, 17 Նոյեմբեր ժամը 2:15ին

Ֆիթիան Սայտա - Հ.Մ.Ը.Մ. (Իսլահ Պըրժ Շիմալի)

●Դ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Կիրակի, 24 Նոյեմբեր ժամը 2:15ին

Հ.Մ.Ը.Մ. - Մահապպա Թրիփոլի (Պուրճ Համուտ)

●Ե. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Կիրակի, 1 Դեկտեմբեր ժամը 2:15ին

Հ.Մ.Ը.Մ. - Շապապ Թրիփոլի (Ժունիէ)

●Զ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Կիրակի, 8 Դեկտեմբեր ժամը 2:15ին

Իթիմասի - Հ.Մ.Ը.Մ. (Թրիփոլի)

●Է. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Կիրակի, 15 Դեկտեմբեր ժամը 2:15ին

Հ.Մ.Ը.Մ. - Ռասինկ (Պուրճ Համուտ)

●Ը. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Շաբաթ, 21 Դեկտեմբեր ժամը 2:15ին

Թատամոն Նապաթիէ - Հ.Մ.Ը.Մ. (Նապաթիէ)

●Թ. ՀԱՆԳՐՈՒԱՆ



Կիրակի, 29 Դեկտեմբեր ժամը 2:15ին

Հ.Մ.Ը.Մ. - Հ.Մ.Ս. (Պուրճ Համուտ)

●Ժ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Շաբաթ, 4 Յունուար 2003 ժամը 2:15ին

Շապապ Խիամ - Հ.Մ.Ը.Մ. (Սաֆա)

●ԺԱ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Շաբաթ, 11 Յունուար ժամը 2:15ին

Ահլի Սայտա - Հ.Մ.Ը.Մ. (Սուր)

●ԺԲ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Շաբաթ, 18 Յունուար ժամը 2:15ին

Հ.Մ.Ը.Մ. - Ռիատա Ուալ Ատապ (Պուրճ Համուտ)

●ԺԳ. ՀԱՆԳՐՈՒԱՆ

Կիրակի, 26 Յունուար ժամը 2:15ին

Իսլահ Պըրժ Շիմալի - Հ.Մ.Ը.Մ. (Իսլահ Պըրժ Շիմալի)



# ԴԱԻԹ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ՝ ՉՈՒԻՑԵՐԻՒՈՅ ՄՐՑԱՇԱՐՔԻ ԱԽՈՅԵԱՆ



**Չ**ուհիցերիոյ Պալ քաղաքին մէջ տեղի ունեցող թենիսի միջազգային մրցաշարքին, արժանթինահայ Դալիթ Նալպանտեան հանդիսացաւ ախոյեան. ան պարտութեան մատնեց երկու հակառակներ:

Արդարեւ, Նալպանտեան, որ ճրգ դասուած էր 21 Հոկտեմբերին սկսած այս մրցաշարքին, առաջին հանգրուանին պարտութեան մատնեց Փրանսացի Օլիվիէ Միլթիսը, երկրորդին՝ արժանթինցի Ակոլսթին Քալերին, երրորդ հանգրուանին իր դիմաց գտնելու համար մրցաշարքի թիւ 1 դասուած բրիտանացի Թիմ Հենմընը: Առաջին սեքը կորսնցնելէ ետք Նալպանտեան «գորաւոր վերադարձ» մը կատարեց շահելով յաջորդ 2 սեքերը եւ անշուշտ՝ ճակատումը: Վերջնական արդիւնք՝ 3-6, 7-6, 6-2:

Նալպանտեանի կիսաւարտականի մրցակիցը նուազ վտանգաւոր չէր: Չուհիցերիացի Ռոսէ Ֆետերէր, որ իբրեւ կրտսեր Նալպանտեանի «նեմիսիս»ը կը նկատուէր, մրցաշարքին Յրգ դասուած Բեմիսամէնն էր եւ կը խաղար հայրենի իր հողին վրայ: Նալպանտեան անոր զիջեցաւ առաջին սեքը՝ 6-7 արդիւնքով, սակայն յաջորդող սեքերը՝ 7-5 եւ 7-6 արդիւնքով շահելէ ետք աւարտական հանգրուանին դէմ յանդիման գտնուեցաւ չիլիցի Ֆեռնանտո Կոնզալէսի դէմ, որ մրցաշարքին 7րդ դասուածն էր:

Պալի մրցաշարքի աւարտականը աւանդաբար կը խաղցուի 5 սեք (3 սեք շահողը կը դառնայ տիտղոսակիր): Երկու հարաւ - ամերիկացիներու միջեւ ճակատումը եղաւ միակողմանի. Հենմընի եւ Ֆետերէրի նման հակառակներ տապալող Նալպանտեան շատ քրտինք չթափեց Կոնզալէսի դէմ եւ 6-4, 6-3 եւ 6-2 արդիւնքով տապալեց զայն:

Այսպիսով, Նալպանտեան տիրացաւ 133,000 տոլարի, ինչպէս նաեւ 50 կէտի, որ «Չեմփիընզ Ռէյս»ի ընդհանուր դասաւորման մէջ զինք բարձրացուց 12րդ դիրքին:

Պալի մէջ Նալպանտեան շահեցաւ տարւան իր երկրորդ մրցաշարքը եւ փաստեց, որ հակառակ հողածածկ դաշտերու մասնագէտ ըլլալուն՝ կրնայ տիրական ներկայութիւն ունենալ այլ «գետին»ներու վրայ ալ: Ան իր առաջին մրցաշարքը շահած էր Ապրիլին՝ էսթորիլի մէջ (հողածածկ), Յունիսին հասած էր Ուիմպլըտընի (խոտածածկ) աւարտական հանգրուանին, իսկ այժմ կը շահէր Պալի «գորգածածկ» դաշտին վրայ:

28 Հոկտեմբերի տուեալներով, Նալպանտեան այս տարի մասնակցած էր 23 մրցաշար-

քերու, ապահոված է 348 կէտ եւ ներկայիս կը գրաւէ միջազգային դասաւորման 12րդ դիրքը, որ ցարդ իր նուաճած բարձրագոյն դիրքն է:

Նալպանտեան ծնած է 1 Յունուար 1982ին, Քորտոպա: Անոր մեծ հայրը Հարաւային Ամերիկա գաղթած է 1920ականներուն, ճողոպրելով Հայկական Յեղասպանութենէն եւ քեմալական հալածանքներէն:

1998ին Նալպանտեան կը շահի «ԵՈՒ. Էս. Օփըն»ի կրտսերներու ախոյեանութիւնը: 1999ին, Կիլերմո Քորիայի հետ կը շահի Ուիմպլըտընի կրտսեր զոյգերու ախոյեանութիւնը:

2001ին Նալպանտեան միջազգային դասաւորման 248րդ դիրքէն կը մագլցի 47րդ դիրք:

Երբ Ուիմպլըտընի մրցաշարքին Նալպանտեանի հարց կը տրուի, թէ ուրկէ՞ կ'առնէ իր ուժը, ան կը պատասխանէ. «Շատ մը տեղերէ. մեծ հայրս Հայաստան ծնած է եւ Արժանթին գաղթած, հայրս Արժանթին ծնած է... կը խորհիմ, թէ ուժս կու գայ շատ մը տեղերէ»: Նոյն մրցաշարքին, այլ հարցազրոյցի մը ընթացքին ան կ'ըսէ. «Ես հայ ընտանիքի զաւակ եմ. մեր ազգը մարտունակ եղած է եւ մեր մէջ պայքարի ոգին միշտ ներկայ է»:

Այո՛, պայքարի ոգի մը, որ կը հաւատանք, թէ օր մը Նալպանտեանը պիտի հասցնէ փառքի գագաթին:



# ՀՈՒՐԵՐ՝ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

● ՆՈՅԵՄԲԵՐ 6-ԻՆ ՊՈԼԿԱՐԻԱՅԵՆ Հայաստան պիտի ժամանե Ողիմպիական խաղերու ծանրաբարձուբեան մրցումներուն երկու անգամ ոսկի մետալի տիրացած Նորայր Նուրիկ-

եանը, որ նաեւ Պոլկարիոյ Ողիմպիական կոմիտէի փոխ նախագահն է:

Նոյեմբեր 8-ին, Հայաստանի մարմնակրթանքի պետական հիմնարկին մէջ տեղի պիտի

ունենայ Նուրիկեանի պատուոյ տոբթորայի տուչութիւնը:

● **ԿՌՓԱՄԱՐՏԻ** երիտասարդներու աշխարհի ախոյեան Դաւիթ Հայրապետեան, որ ցարդ բոլոր մրցաշարքերուն իր մասնակցութիւնը կը բերէր Ռուսիոյ կազմէն, փափաք յայտնած է այսուհետեւ իր մասնակցութիւնը բերելու Հայաստանի կազմէն: Հայաստանի կուփամարտի ֆետերասիոնի փոխ նախագահ Դերենիկ Գաբրիէլեան մեկնած է Ռուսիա՝ այս գծով բանակցութիւններ վարելու Ռուսիոյ ֆետերասիոնի ներկայացուցիչներուն հետ:

\*  
\* \*

● **ԵՐԻՏԱՍԱՐԴԻ** հեծելանւոր Տիգրան Կորկոտեան, որ մաս կը կազմէ ֆրանսական «Վիլ Ռոք» խումբին, արդէն իր մասնակցութիւնը բերած է 19 մրցումներու եւ լաւ տպաւորութիւն ձգած է ֆրանսացի հեծելարշաւի մասնագէտներուն մօտ: «Վիլ Ռոք» խումբին պատասխանատուները ցանկութիւն յայտնած են երկարաձգել Կորկոտեանի պայմանագրութիւնը:

Տիգրան Կորկոտեան, որ Հայաստանի հեծելարշաւի խումբին լաւագոյն տարրը կը նկատուի, առաջին մարզիկն է, որ իբրեւ արհեստավարժ պայմանագրութիւն կնքած է Ֆրանսայի մէջ արհեստավարժ խումբի մը հետ:

\*  
\* \*

● **ՀԱՅԱՍՏԱՆԻ** ֆուլթպոլի 19 տարեկանէն վար կրտսերներու հաւաքականը, որ գտումի մրցումներու մասնակցելու համար մեկնած էր Լիթվանիա, մրցաշարքը աւարտեց 3 պարտութեամբ: Ան յաջողաբար պարտուեցաւ Սլովաքիայէն 2-1, Իտալիայէն՝ 4-1 եւ հիւրընկալ Լիթվանիայէն՝ 5-0:

Հայաստանի հաւաքականին մարզիչն է արժանթինցի Օսքար Լոփէզ:

## ՅՈՒՆԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ 2 - 0

«Եւրո-2004»-ի գտումի մրցաշարքի իր 2րդ մրցումին, Հայաստանի ֆուլթպոլի ազգային խումբը Աթէնքի մէջ 2 - 0 արդիւնքով պարտութիւն մը կրեց դաշտին տէրերէն՝ Յունաստանէն: Հայաստան պարտուեցաւ կազմէ մը, որ գտումի նախորդ իր 2 մրցումները պարտութեամբ աւարտած էր: Ասիկա չի նշանակեր, սակայն, թէ Յունաստան իր խաղաոճը բարելաւեց Հայաստանի դէմ մրցումին: Ո՛չ: Ան դաշտ ներկայացաւ նոյն մարզիկներով եւ նոյն խաղաոճով եւ իր դիմաց գտաւ անկազմակերպ Հայաստանի ազգային խումբը:



Երեւանի մէջ, Ուքրանիոյ դէմ մրցումին 2 - 0 արդիւնքով ետ մնալէ ետք, Հայաստանի կազմը 2րդ կիսախաղին դաշտ ներկայացաւ ամբողջովին «կերպարանափոխուած»: Խումբին մօտ զգալի էր պայքարելու ոգին, որուն իբրեւ բնական արդիւնք մրցումը աւարտեցաւ 2 - 2 հաւասարութեամբ: Օրին, ԵՆ. Է. ԷՖ. Ա.ի կայքը այս մրցումը որակած էր «Օրուան ճակատումը»:

Յունաստանի դէմ մրցումին, Հայաստանի կազմէն կը բացակայէր յառաջապահ Անտոն Մովսիսեան (Սաթիւրն), որ մերժած էր մաս կազմել ազգային խումբին, Ուքրանիոյ դէմ մրցումէն ետք վիճաբանելէ ետք մարզիչ Օսքար Լոփէզի հետ:

Մրցումին 2րդ վայրկեանին իսկ, Թիմիսթոքլիս Նիքոլայտիս գլխու հարուածով նշանակեց Յունաստանի առաջին կոլը: 4 վայրկեան ետք Արթուր Պետրոսեան կորսնցուց արդիւնքը հաւասարեցնելու առիթ մը: Մինչ այդ, Յունաստան սկսաւ ամբողջութեամբ տիրապետել, իսկ հայրենի մարզիկները որդեգրեցին հակայարձակողական խաղաոճը եւ ստեղծեցին քանի մը վտանգներ՝ Արտաւազ Գարամբանի, Կարէն Տոխոյեանի եւ մանաւանդ Արման Գարամբանի միջոցով, որ 31րդ վայրկեանին կորսնցուց մրցումին արդիւնքը փոխելու ստոյգ առիթ մը: Կիսախաղը աւարտեցաւ 1 - 0՝ ի նպաստ Յունաստանի:

2րդ կիսախաղին Հայաստան «բարելաւուած» ներկայացաւ դաշտ: Հայրենի մարզիկները մասամբ յաջողեցան դաշտին կեդրոնը տիրապետութիւն հաստատել



մինչեւ 59րդ վայրկեան, երբ նոյնինքն Նիքոլայտիս յաջողեցաւ խաբել յետասպահները եւ նշանակել Յունաստանի 2րդ կոլը: Այս կոլէն ետք հայրենի մարզիկները փորձեցին արագ կոլով մը հակադարձել, սակայն չյաջողեցան:

Հայրենի մամուլը խստիւ քննադատեց արժանթինցի մարզիչ Օսքար Լոփէզի որդեգրած խաղաոճը:



# ԻՆՉՊԵՍ «ԾՆԱԽ» ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆԷՆ ՄԵԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՎԱՅԵԼՈՂ ՄԱՐԶԱԽԱՂԸ ՖՈՒԹՊՈՒԼԸ

Ֆուտբոլը աշխարհի տարածքին ամենէն մեծ ժողովրդականութիւն վայելող մարզախաղն է անկասկած: Ֆուտբոլին վայելած այս հռչակը կարելի է վերագրել այն իրողութեան, որ այս մարզախաղը շատ գործնական է եւ անոր օրէնքները շատ պարզ են յարաբերաբար այլ մարզախաղերու: Փաստօրէն, կատարուած վերջին վիճակագրութեան համաձայն՝ աշխարհի տարածքին ֆուտբոլ խաղացողներուն թիւը կը հասնի 150 միլիոնի, իսկ Մոնտիալի մրցումներուն հետեւողներուն թիւը՝ 2 միլիարդ:

Ինչ կը վերաբերի ֆուտբոլի պատմութեան, անոր ծագումին յստակ թուականը չենք գիտեր, բայց անոր նման խաղեր կիրարկուած են շատ հին ժամանակներէն ի վեր: Այսպէս, Ն. Ք. 206ին չինացիք ունեցած են նման խաղ մը, իսկ յոյները կիրարկած են ֆուտբոլին շատ նմանող եւ էփիսքիւրոս (episkuros) կամ հարփաթոն (harpaton) կոչուած մարզախաղը, որ աւելի ուշ՝ 2րդ դարուն նաեւ թափանցած է Հռոմ: Կենթադրուի, որ հռոմէացիք իրենց երկար տիրապետութեան շրջանին այս խաղը տարածած են Եւրոպայի եւ Անգլիոյ տարածքին: Աւելի ուշ, այս

խաղը շատ մեծ խանդավառութեամբ կիրարկուած է Մեծն Բրիտանիոյ տարածքին եւ այդ պատճառով ալ շատերու կարծիքով ֆուտբոլը ծնունդ առած է Բրիտանիոյ մէջ:

Իսկ ինչ կը վերաբերի արդի ֆուտբոլին, անկա սկզբնական շրջանին Անգլիոյ մէջ կը խաղցուէր դպրոցներէն ներս իբրեւ ձմեռնային մարզախաղ, սակայն միջդպրոցական խաղեր տեղի չէին ունենար, նկատի ունենալով, որ իւրաքանչիւր դպրոց ունէր իր օրէնքները: Այս բարդութենէն ձերբազատելու փորձ մը կատարուեցաւ 1843ին՝ Քէմպրիճ համալսարանին մէջ, իսկ 1846ին համալսարաններն ու դպրոցներուն մեծամասնութիւնը արդէն իսկ կը հետեւէին Քէմպրիճի օրէնքներուն: Աւելի ուշ, 1863ին, Լոնտոն գտնուող դպրոցական եւ ոչ-դպրոցական ակումբներուն միջեւ տեղի ունեցած շարք մը հանդիպումներէ ետք կազմուեցաւ ֆուտբոլի միութիւնը՝ Էֆ. Էյ.ը: Թէեւ սկիզբը կարգ մը շրջաններ (ինչպէս՝ Շեֆիլտ) մերժեցին Էֆ. Էյ.ին օրէնքները, սակայն ժամանակի ընթացքին Էֆ. Էյ.ին մաս կազմող ակումբներուն թիւը բարձրացաւ եւ 1870ականներուն միայն Սկոտլանդի միութեան օրէնքներն էին, որ կը տարբերէին Էֆ. Էյ.ի օրէնքներէն:


1880ական թուականներուն սկսաւ արհեստավարժ ֆուտբոլի շրջանը: Արդարեւ, այս շրջանին էր, որ 2 խումբեր Էֆ. Էյ.էն հեռացուեցան, որովհետեւ արհեստավարժ մարզիկներ դաշտ ներկայացուած էին. սակայն շուտով Էֆ. Էյ.ն ալ համաձայնեցաւ այս քայլին, ինչ որ ճամբան հարթեց 1888ին կազմակերպուած ֆուտբոլի լիգային, որուն մասնակցեցան 12 խումբեր: 1892ին լիգային խումբերուն թիւը հասաւ 28ի, իսկ 1920ին հակառակ Էֆ. Էյ.ի փորձերուն՝ անոր վրայ եկան առնուելու հարաւային խումբերն ալ, եւ այսպիսով լիգային տուին ազգային բնոյթ:

Հետագային, Երկու Համաշխարհային Պատերազմներուն միջեւ ֆուտբոլին հռչակը որոշ չափով նուազեցաւ, բայցեւայնպէս Բ. Աշխարհամարտէն ետք այս մարզախաղը վերագտաւ իր փառքի օրերը եւ դարձեալ սկսաւ մեծ թիւով համակիրներ ունենալ:

Ֆուտբոլը առաջին անգամ Անգլիայէն դուրս թափանցեց 1880ականներուն: Արդ, 1880ին, անգլիացի ճամբորդներու միջոցաւ անիկա մուտք գործեց Փրակա եւ Վիեննա, իսկ 1887ին ֆուտբոլը հասաւ Ռուսիա: 1889ին Դանիոյ մէջ կազմուեցաւ Կոլտսփելի միութիւնը եւ նոյն տարին ալ կազմուեցաւ Հոլանտայի ֆուտբոլի ֆետերասիոնը:



# ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԸ՝ ՀԱՄԱՑԱՆՅԻՆ ՎՐԱՅ



Քայտֆի պաշտոնական կայքը կ'ընդգրկէ անոր կեանքէն եւ ասպարէզէն մանրամասնութիւններ: Հայութիւնը լաւապէս ներկայացուած է իր ազգութեամբ հպարտ ծորքայտֆի կայքին մէջ:

\* [www.armenians.com/links/sports](http://www.armenians.com/links/sports) կայքին մէջ

ներկայացուած են հայկական մարզաշխարհին առնչուող համացանցի շարք մը կայքերու «լինք»եր:

\* [www.eskai.com/rakedjian](http://www.eskai.com/rakedjian) - Սոլթ Լէյք Սիթիի Ձմեռնային Ողիմպիական խաղերուն Հայաստանը ներկայացուցած չմշկումի ֆրանսահայ ախոյեանուհի Վանեսա Ռաքէճեանի պաշտոնական կայքը




Հայկական մարզաշխարհին, հայրենի մարզական ֆետերասիոնի թէ սփիւռքահայ եւ հայրենի մարզիկներու նուիրուած կայքերու փունջ մը կը ներկայացնենք ստորեւ:

\* [www.armchess.am](http://www.armchess.am) - Հայաստանի ճատրակի ֆետերասիոնի պաշտոնական կայքը: Հայկական ճատրակի մասին լուրեր կարելի է ստանալ նաեւ «այցելելով» [www.armenianknight.com](http://www.armenianknight.com) հասցէով կայքը: Շահեկան է նաեւ կէրի Գասպարովի [www.kasparov.com](http://www.kasparov.com) կայքը:

Հայկական մարզաշխարհին, հայրենի մարզական ֆետերասիոնի թէ սփիւռքահայ եւ հայրենի մարզիկներու նուիրուած կայքերու փունջ մը կը ներկայացնենք ստորեւ:

\* [www.cilicia.com/armo11.com](http://www.cilicia.com/armo11.com) - «Կիլիկիա» ընդարձակ կայքի մարզական բաժինը կը ներկայացնէ հայրենի եւ հայազգի մարզիկներ, որոնք Ողիմպիական մետալակիրներ հանդիսացած են: Կայքը նաեւ կը ներկայացնէ վերջին երկու ողիմպիականներու մասնակից հայ մարզիկներու ընդհանուր ցանկը:

\* [www.youridjorkaeff.com](http://www.youridjorkaeff.com) - Ֆրանսայի կազմին հետ Մոնտրիալի բաժակը բարձրացուցած հայազգի ֆուլթպոլիստ Եոլրի ծորքայտֆի պաշտոնական կայքը



## ԻՆՉՊԷՍ «ԾՆԱԻ» ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆԷՆ...

Շարունակուած՝ 6րդ էջէն

Ջարմանալիօրէն, սակայն, ֆուլթպոլը բաւական ուշ հասաւ Մ. Նահանգներ, իսկ մուտք գործելէն ետք ալ ընդհանրապէս մնաց ամերիկեան ֆուլթպոլի շուքին տակ: Արհեստավարտ ֆուլթպոլը Մ. Նահանգներու մէջ սկսաւ 1968ին՝ Հիւսիսային Ամերիկայի ֆուլթպոլի լիկայով (էն. էյ. էս. էլ.), որ սակայն երկար չընթացաւ եւ լուծուեցաւ 1985ին: Էն. էյ. էս. էլ.էն ետք ալ արհեստավարտ ֆուլթպոլը շարունակուեցաւ Մ. Նահանգներու մէջ, բայց միշտ ալ մնալով ամերիկեան ֆուլթպոլին ու պէյսպոլին շուքին տակ:

1904ին ֆուլթպոլը արդէն իսկ տարածուած էր Եւրոպայի մէջ, ինչ որ պատճառ դարձաւ, որ Պելճիքա, Դանիա, Ֆրանսա, Հոլանտա, Սպանիա, Շուէտ եւ Զուիցերիա միասնաբար հիմնեն ՖԻՖԱ-ն: Առ այդ, ՖԻՖԱ-ն եւ էֆ. էյ. էյ. էլ. միասնաբար փորձեցին թափ տալ նաեւ ոչ-արհեստավարտ ֆուլթպոլին, սակայն այս քայլը որոշ չափով շփոթ ստեղծեց, երբ կարգ մը ազգային

խումբեր մերժեցին իրենց մասնակցութիւնը բերել շարք մը միջազգային մրցաշարքերու: 1920ին Անգլիա բաժնուեցաւ ՖԻՖԱ-ն՝ բողոքելով Գերմանիոյ եւ անոր դաշնակիցներուն ներկայութեան դէմ: Անիկա ՖԻՖԱ-ին վերամիացաւ 1946ին:

1930ին ՖԻՖԱ-ն կազմակերպեց առաջին Մոնտրիալը, որ տեղի ունեցաւ Մոնթեվիտէոյի մէջ եւ վերջ գտաւ նոյնինքն Ուրուկուէյի յաղթանակով: Այս շրջանին էր, որ որոշուեցաւ Մոնտրիալը կազմակերպել իւրաքանչիւր 4 տարին անգամ մը: 1955ին սկսաւ Եւրոպայի ախոյեաններու բաժակը (ակումբներ), մասնակցութեամբ Եւրոպական ֆուլթպոլի Միութեան մաս կազմող 33 երկիրներու ակումբներուն: Այս նոյն միութիւնը նաեւ կազմակերպեց Եւրոպայի բաժակակիրներու բաժակը (1960), որ ներկայիս տեղի է ունենար: Աւելի ուշ, Հարաւային Ամերիկայի մէջ կազմակերպուեցաւ Քոփա Լիպերթատո-

րէսը (1960), որ ճամբայ հարթեց «Եւրոպայի ախոյեան - Հարաւային Ամերիկայի ախոյեան» տարեկան մրցումներուն: 1955ին սկսաւ Եու.է.էֆ.Այ.ի բաժակի մրցաշարքը, որ 1971ին դարձաւ Եւրոպայի ամէնէն մեծ մրցաշարքը, երբ անոր մասնակցեցան 64 խումբեր:

Ինչ կը վերաբերի ազգային խումբերու մրցակցութեան, կը նկատենք, որ Հարաւային Ամերիկայի ախոյեանութիւնը սկսած է 1916ին, Ափրիկէի ախոյեանութիւնը՝ 1957ին, իսկ Եւրոպայինը՝ 1960ին:

Ներկայիս, ֆուլթպոլը աւելի քան 178 երկիրներու միջեւ թիւ 1 մարզախաղն է, իսկ ՖԻՖԱ-ի անդամներուն թիւը կը հասնի ՄԱԿի անդամներու թիւին, ինչ որ կ'ապացուցանէ աշխարհի տարածքին ֆուլթպոլին վայելած մեծ ժողովրդականութիւնը:

# ՄԱՐԴ - ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ՃԱԿԱՏՈՒՄԸ Կ'ԱՒԱՐՏԻ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԵԱՄԲ

Պահրէյնի մէջ տեղի ունեցող «Պրէյնգ ին Պահրէյն» ճակատումը՝ մահկանացուներու եւ համակարգիչներու աշխարհի ախոյեաններուն միջեւ, վերջ գտաւ 4-4 հաւասարութեամբ:

2000ին Կէրի Գասպարովը գահընկէց ըրած ոռու Վլատիմիր Բրամնիք երկու յաղթանակ, երկու պարտութիւն եւ 4 հաւասարութիւններ արձանագրեց աշխարհի համակարգիչներու ախոյեան «Տիփ Ֆրից» համակարգչային ծրագիրին դէմ, «գրպանելով» Պահրէյնի թագաւոր Համատի հաստատած 800 հազար տոլարի մրցանակը: Յաղթանակի պարագային Բրամնիք պիտի շահէր մէկ միլիոն տոլար:

Բրամնիքի արձանագրած հաւասարութիւնը թէեւ ցնցիչ է, սակայն ան դժգոհելու շատ պատճառներ չունի: Մրցաշարքի սկիզբը 2 կէտով առաջ անցած Բրամնիք մրցաշարքի կիսուն կատարեց սկսնակ ճատրակ խաղացողի սխալ մը եւ առիթ տուաւ, որ «Տիփ Ֆրից» կէտերու տարբերութիւնը նուազեցնէ մէկի: Յաջորդ հանգրուանին Բրամնիք կրեց իր երկրորդ պարտութիւնը: Այս յեղաշրջումէն ետք, յաջորդող հանգրուաններուն Բրամնիք չկրցաւ ինքզինք վերագտնել եւ բաւարարուեցաւ հաւասարութիւններով:

Աշխարհի ներկայ ախոյեանը, սակայն, դժգոհելու պատճառներ չունի, որովհետեւ ան գէթ յաջողեցաւ հաւասարութիւն արձանագրել, մինչ Կէրի Գասպարով 1996ին «Տիփ Պլու» համակարգչային ծրագիրը տապալելէ ետք 1997ին պարտութիւն կրած էր «Տիփըր Պլու» գերհամակարգիչին դէմ:

Այսպիսով, մարզը անգամ մը եւս փաստեց, թէ երկվայրկեանի մէջ միլիոնաւոր քայլեր հաշուող սիլիքոնէ «ափղահային» դէմ կրնայ մրցիլ



հաւասարէ - հաւասար դիրքի վրայ: Սակայն մա՞րդ, թէ համակարգիչ հարցադրումին մէջ վերջին խօսքը չէ ըսուած տակաւին: Բրամնիք, ինչպէս նաեւ «Տիփ Ֆրից» ծրագիրը պատրաստողները խանդավառութեամբ ընդունած են երկրորդ ճակատումի մը գաղափարը, մինչ աշխարհի թիւ 1 դասուած Կէրի Գասպարով յառաջիկայ տարի դարձեալ իր ուժերը «պիտի չափէ» համակարգիչին հետ:

## ՉԻՆԱՍՏԱՆԻ ՏԻՐԱԿԱՆ ...


### Շարունակուած՝ 2րդ էջին

Թեան մէկ պարագայ արձանագրուեցաւ. Սոնի-Թա Ռանի (Հնդկաստան), որ 1500 մեթր վազքի մրցումին ոսկի մետալին տիրացած էր, իսկ 5000 մեթր վազքին՝ պրոնզ մետալին, խթանիչ դեղ գործածած էր:

Վերադառնալով չին մարզիկներուն, 16 տա-

րեկան Զհանկ Նան շահեցաւ հինգ ոսկի մետալներ՝ աղջկանց մարմնամարզի մրցումներուն, մինչ անոր ազգակիցը՝ 17 տարեկան Զիւ Եանուէ շահեցաւ չորս ոսկի մետալ՝ աղջկանց լողարշաւի մրցումներուն:

Զինաստանի Ողիմպիական յանձնախումբին



փոխ նախագահը՝ Լի Ֆիւրոնկ թէեւ գովասանքով արտայայտուեցաւ իր մարզիկներուն արձանագրած արդիւնքներուն մասին, սակայն ըսաւ, որ անոնց արձանագրած արդիւնքները բաւական հեռու էին միջազգային չափանիշներէն, թէեւ աշխարհի կարգ մը մրցանիշներ հաստատուեցան, ինչպէս նաեւ ասիական մրցանիշներ կոտորուեցան անոնց կողմէ: